



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ

« 07 » \_\_\_\_\_ 12 \_\_\_\_\_ 2020թ.

№ 08/ԼԱ/ - 524

Նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 6-ը դիտված հիդրոոդերևութաբանական  
պայմանները ՀՀ-ում

Նոյեմբերի 30-ին, դեկտեմբերի 6-ին հանրապետության առանձին շրջաններում  
դիտվել են տեղումներ՝ լեռնային շրջաններում ձյուն, նախալեռնային և հովտային  
շրջաններում՝ թաղ ձյուն: Տեղումների առավելագույն գումարային քանակը կազմել է  
Բագրատաշենում՝ 14մմ, Արարատյան դաշտում մինչև 1մմ, մնացած շրջաններում  
մինչև՝ 7-10մմ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը նոյեմբերի 30-ին, դեկտեմբերի 1-ին եղել է  
նորմայի սահմաններում, դեկտեմբերի 2-5-ին բարձր է եղել նորմայից 1-3աստիճանով,  
բացառությամբ Լոռի և Տավուշի, որտեղ այդ օրերին ցածր է եղել նորմայից 1-2  
աստիճանով: Դեկտեմբերի 6-ին եղել է նորմայից ցածր մինչև 2 աստիճանով, միայն  
Արարատյան դաշտում բարձր է եղել 2-3 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է դեկտեմբերի 2-ին, երբ Սյունիքի  
հովիտներում, Տավուշում գրանցվել է +10...+14°C, Լոռիում, Արարատյան դաշտում,  
Վայոց Ձորի, Արագածոտնի և Սյունիքի նախալեռներում +7...+11°C, Շիրակում,  
Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +4...+8°C  
(Մարտունի՝ +9 °C, Ամասիա, Աշոցք՝ -1°C ) աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Շիրակում, Գեղարքունիքում,  
Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում, Սյունիքի նախալեռներում՝ -4...-8°C,  
Լոռիում՝ -2...-5°C, Տավուշում՝ 0...-4°C, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի  
նախալեռներում՝ 0...-2°C, Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտում՝ -1...+4°C:

Ձյան ծածկի բարձրությունը Վանաձորում, Ստեփանավանում, Գավառում,  
Սևանում, Գորիսում կազմում է 1սմ, Արագած բարձր լեռնայինում՝ 33սմ: Մնացած  
շրջաններում ձյան ծածկը բացակայում է:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1 սմ-ով և կազմել՝ 1900.53մ (06.12.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 7 սմ-ով:

Հարգանքով՝  
Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան

*Տնօրենի պետական Գազիկ Սուրենյան*  
Հեռ.՝ 012 31 79 29